

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ՝ Ի ՊԱՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԳԷՈՐԳ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի հովանիին ներքեւ գործող Հայ Օգնութեան Ֆոնտը (ՀՕՖ), նախագահութեամբ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, մեծարանքի երեկոյ մը կազմակերպած էր ի պատիւ ՀՕՖ-ի հիմնադիր, նախկին ատենապետ եւ այժմու պատուոյ ատենապետ տիար Գեորգ Յովնանեանի:

Տիար Յովնանեան այն բացառիկ անձնաւորութիւններէն մէկն է որ տարիներ շարունակ, սիրայօժար կերպով իր բարոյական եւ մեծագումար նիւթական աջակցութիւնը բերած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայրենիքի բարօրութեան եւ զարգացման ի նպաստ: Շնորհիւ իր անխնջ ջանքերուն եւ առաջնորդութեան հիմնուած է Ամերիկայի Արեւելեան թեմի հովանիին ներքեւ գործող Հայ Օգնութեան Ֆոնտը. այն կազմակերպութիւնը՝ որ ամենէն աւելի օգնութեան ձեռք երկարած է Հայաստանին՝ 1988 թուականի ահաւոր երկրաշարժէն ետք:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Նոյեմբեր 18-ին Նիւ Եորքի Հանրային գրադարանի շքեղ սրահին մէջ, որուն մուտքին հիւրերը կը դիմաւորէր ՀՕՖ-ի վարիչ-տնօրէն տիար Գառնիկ Նանակիւեան:

Մօտ 300 ներկաներուն մէջ կը գտնուէին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարար տիար Վարդան Օսկանեան, Հայաստանին մէջ ԱՄՆ-ի դեսպան տիար Ճան Էվընզ, ԱՄՆ-ի առաջին դեսպան տիար Հարրի Կիլմոր, ԱՄՆ-ի Հայաստանի Հանրապետութեան դեսպան տիար Թաթուլ Մարգարեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի դեսպան տիար Արմէն Մարտիրոսեան, Քարնէկի Կազմակերպութեան նախագահ, ինչպէս նաեւ Պրատուն Համալսարանի եւ Նիւ Եորքի Հանրային գրադարանի նախկին նախագահ տիար Վարդան Կրեկորեան, Խղճմտանքի Կոչ հիմնադրութեան հիմնադիր Րաբբի Արթըր Շնայըր, ՄԱԿ-ի պաշտօնէաներէն տոկթ. Մովսէս Աբէլեան, ծանօթ աստղաբնագէտ տոկթ. Երուանդ Թերզեան, Նիւ Ճըրզի նահանգի նախկին կառավարիչ Պրէնտըն Պըրն, ինչպէս նաեւ հայ եւ ոչ հայ ծանօթ անձնաւորութիւններ եւ գործարարներ:

Ամերիկեան եւ հայկական օրհներգներէն ետք՝ բացման աղօթքը արտասանեց Ամերիկայի Արեւելեան թեմի թեմական պատուիրակ եւ Միջեկեղեցական Յարաբերութեանց վարիչ Գերշ. Տ. Վիգէն եպս. Այգազեան:

Մեծարանքի այս ձեռնարկին բացման խօսքը կատարեց օրուան հանդիսավար եւ ՀՕՖ-ի այժմու ատենապետ տիար Ռանտի Սապահ-Կիլեան ի մասնաւորի ըսելով. «Ան հիմնադիրներէն եղաւ Հայ Օգնութեան Ֆոնտին՝ որպէսզի երկարատեւ ժամանակով օգտակար հանդիսանար Հայաստանին»:

Տիար Հարրի Կիլմոր, որ Միացեալ Նահանգաց առաջին դեսպանն էր Հայաստանի Հանրապետութեան եւ ունէր աւելի քան 35 տարիներու դիւանագիտական փորձառութիւն, յիշեց իր առաջին հանդիպումը տիար Յովնանեանի հետ Նիւ Եորքի Առաջնորդարանի կեդրոնին մէջ՝ նախքան իր նոր պաշտօնին ձեռնարկելը: Իր խօսքին մէջ

ան ըսաւ. «Հայ Օգնութեան Ֆոնտը Գեորգ Յովնանեանի զաւակն է, իր ջանքերուն շնորհիւ այդ կազմակերպութիւնը բարձրացաւ իր այսօրուան գնահատելի վիճակին»: Ան մեջբերումներ ըրաւ Վահան Թէքէեանի, Վահան Տէրեանի եւ Գեորգ Էմինի բանաստեղծութիւններէն: Յիշեց թէ ի՛նչ վիճակ կը ներկայացնէր Հայաստանը՝ երբ ինք դեսպանի պաշտօնին կոչուեցաւ. ելեքտրականութիւն, ջուր, տաք ջուր չկային եւ երկրաշարժէն ետք շատեր փայտաշէն կամ թիթեղաշէն տնակներու մէջ ապաստանած էին: Ազըրպէյճանի շրջափակումը կազմալուծած էր Հայաստանի տնտեսութիւնը եւ չորս միլիոն հայերը կը գտնուէին ազգային մեծ աղէտի եզրին: «Սակայն մթնոլորտը այդ օրերուն իսկ յուսահատական չէր, որովհետեւ ժողովուրդը ունէր վերապրելու եւ դժուարութիւնները յաղթահարելու կորովը, քաջութիւնը, վճռականութիւնը», ըսաւ տիար Կիլմոր, որ իր խօսքը աւարտեց հետեւեալ բառերով. «Կեցցէ՛ Գեորգ Յովնանեանը, կեցցէ՛ Հայ Օգնութեան Ֆոնտը եւ կեցցէ՛ ազատ, անկախ Հայաստանը»: Երկարատեւ եւ յոտնկայս ծափահարութիւններով դիմաւորուեցաւ դեսպան Կիլմորի խօսքը:

Դարձեալ երկարատեւ եւ յոտնկայս ծափահարութիւններով ողջունուեցաւ դեսպան Ճան Էվլինգի ներկայութիւնը:

Գործադիր Յանձնախումբի ատենապետ տիար Յակոբ Գույումճեան գնահատեց Յանձնախումբի անդամներուն նուիրեալ աշխատանքը եւ ըսաւ որ մէկ միլիոն տոլարէ աւելի հանգանակուած է ի պատիւ տիար Գեորգ Յովնանեանի՝ որ ՀՕՖ-ի գլխաւոր ղեկավարն է: Ըսաւ որ ան նախաձեռնութեան ոգի եւ գործառնութեան մասնաւոր յատկութիւն ունի. անոր հաստատած ընկերութիւնը ամբողջ Ամերիկայի տուն կառուցող ութ ընկերութիւններէն մէկն է: Յիշեց անունները Ամերիկայի եւ Հայաստանի մէջ այն կառոյցներուն՝ որոնք բարձրացած են շնորհիւ տիար Յովնանեանի տեսիլքին եւ նիւթական օժանդակութեան:

Օրուան մեծարեալին որդին եւ Գեորգ Յովնանեան Ընկերութեան տնօրէն Արա Յովնանեան ներկայացուց իրենց ընտանեկան կեանքէն պատկերներ: Ան ըսաւ. «Հայրս միշտ յանդուգն մտածող մը եղած է. ան ինծի սորվեցուցած է «քու խօսքդ քու երաշխաւորագիրդ է»: Ես իրմէ շատ բան սորվեցայ՝ քան թէ դպրոցներէն: Ան երազ մը ունէր եւ ամէն ջանք թափեց որպէսզի այդ երազը իրականանայ: Ապա իր ուշադրութիւնը դարձուց իր ունեցած բարիքներէն բաժին հանելու իր ազգակիցներուն եւ ամերիկացի ժողովուրդին: Ան փառք չէր փնտրեր: Իմ հայրս եւ մայրս մեզի սորվեցուցին սէրը, հաւատարմութիւնն ու նուիրումը»:

Հայրենի երգիչ Մերկէյ Բարսեղեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Իվան Սոլոմոնի, ներկայացուց կարգ մը երգեր:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարար տիար Վարդան Օսկանեան, որ Նիւ Եորք եկած էր յատկապէս ներկայ գտնուելու համար մեծարանքի այս երեկոյթին: Տրուած ըլլալով որ ան Գերմանիայէն կու գար, ուր գացած էր Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Ռոպէրթ Քոչարեանի հետ, նախ տիար Յովնանեանին փոխանցեց Հայաստանի Հանրապետութեան նախագահին ողջոյնները եւ համայն հայ ժողովուրդի բարեմաղթութիւնները: «Հայ-Ամերիկեան մեծագոյն յաջողութեան պատմութիւնը կը ներկայացնէ ան», ըսաւ Արտաքին գործոց նախարարը եւ յիշեց տիար Յովնանեանի բարեգործութիւնները:

Մայր Հայրենիքի մեջ՝ գլխաւորաբար Հայաստանի երկրաշարժէն ետք: 1992 թուականին երբ Հայաստանի Հանրապետութեան դրօշակը ծածանեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կեդրոնին մէջ, «Բոլոր հայերու երազը իրականացած էր. մենք դարձած էինք ազգ մը պետականութեամբ: Մեր ինքնութիւնն ալ բարեփոխուած էր: Մենք կարիքը ունինք ժողովրդավարական, հզօր եւ բարեբեր Հայաստանի մը, որ արդէն իսկ իր վերագարթօնքի ճամբուն մէջ կը գտնուի», ըսաւ ան, որուն թելադրիչ խօսքերը դիմաւորուեցան բուռն ծափահարութեամբ:

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Գեորգ Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր ելոյթին մէջ յիշեց թէ 1991 թուականին, Հայաստանի անկախութենէն ետք, ինչպէս երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը տիար Գեորգ Յովնանեանը ընտրած էր որպէս կնքահայր Անկախութեան Միւտոնի օժման: «Վազգէն Կաթողիկոսը տիար Յովնանեանի մէջ տեսաւ այն անձը՝ որ ամբողջութեամբ նուիրուած էր իր ազգին, եւ որ օրինակ կը ծառայէր մեր յաջորդ սերունդներուն»: Ապա, խօսեցաւ թէ ինչպէս, երկրաշարժէն ետք տիար Յովնանեան կազմակերպեց Հայ Օգնութեան Ֆոնտը, առաջնորդեց անոր քայլերը եւ ճշդեց օգնութեան դաշտերը եւ ծրագրեց մարդասիրական յայտագիրները. «Այս աշխատանքը փորձառութեան կը կարօտէր, եւ տիար Յովնանեան իր ուսերուն վրայ առաւ այդ ծանրութիւնը՝ տրամադրելով բազում ժամեր եւ տքնաջան աշխատանք: Հայ Օգնութեան Ֆոնտը այսօր դադրած պիտի ըլլար գոյութիւն ունենալէ՝ եթէ տիար Յովնանեանի առաջնորդութիւնը, տեսիլքը, նուիրումը չըլլային եւ մեր ժողովուրդին համար մեծ առաքելութեան մը վստահութիւնը չունենար ան», ըսաւ Սրբազան Հայրը:

Փոքր դադարէ մը ետք՝ տասը վայրկեան տեւող ժապաւէն մը ցուցադրուեցաւ «Մարդը եւ իր տեսիլքը» խորագիրով՝ նուիրուած Գեորգ Յովնանեանին:

Ապա ծանուցուեցաւ, թէ ՀՕՖ-ի Երեւանի գրասենեակներու շէնքը, որուն պաշտօնական բացումը պիտի կատարուի 2007 թուականի Յունիսին, պիտի կոչուի «Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան Շէնք»: ՀՕՖ-ի Հոգաբարձութեան փոխ-ատենապետ տոքթ. Էտկար Յովսէփեան մասնաւոր յուշատախտակ մը յանձնեց մեծաբեալին, ինչպէս նաեւ «Յայտարարագիր մը», որուն համաձայն «Գեորգ Յովնանեան Օր» պիտի նշուի ամէն տարի ՀՕՖ-ի բոլոր գրասենեակներուն կողմէ:

Տեղեկացուեցաւ նաեւ որ Նիւ Ճըրզիի *գոնկրէսմէն* Ֆրանք Փալոն ի պատիւ տիար Գեորգ Յովնանեանի շնորհաւորագիր մը տպած է Congressional Record-ին մէջ:

Յոտնկայս ծափահարութեամբ բեմ ելաւ տիար Գեորգ Յովնանեան, որ իր իրաւատուկ համեստութեամբ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ելոյթ ունեցողներուն, ներկաներուն եւ Գործադիր Յանձնախումբի անդամներուն: Մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց իր կողակիցին՝ Սիրվարդին, եւ իր ընտանիքի անդամներուն՝ աւոնց ցուցաբերած սիրոյն եւ զօրակցութեան համար:

Այս առիթով հրատարակուած էր գեղատիպ, գունաւոր եւ պատկերազարդ յուշամատեն մը, ուր տպուած էին շնորհաւորական գիրեր եւ գրութիւն մը՝ տիար Գեորգ Յովնանեանի անձին ու իրականացած երազին մասին: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Իր գիրին մէջ կ'ըսէր. «... Ուրախութիւն է Հայրապետիս համար այս առիթով գնահատանքի եւ բարեմաղթանքի մեր խօսքը յղել Ձեզ՝ սիրելի հա-

ւատաւոր զաւակիդ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգային բարերարիդ, որ ծնողներից ժառանգած մեծ ու անկեղծ սէրը հարազատ ժողովրդի, մեր Եկեղեցու եւ Հայրենիքի հանդէպ դարձրել էք առաջնորդող լոյսը Ձեր կեանքի ու գործունէութեան: ...Սիրելի պրն Յովնանեան, Միաձնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Հայրապետական Մեր աղօթքով առ Աստուած ի խորոց սրտի Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ, տիկին Սիրվարդին եւ Ձեր ընտանիքի անդամներին եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերին»:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպերթ Քոչարեան կը գրէր. «... Մենք ըստ արժանւոյն գնահատում ենք Ձեր վիթխարի ներդրումը եւ մասնակցութիւնը Հայաստանի վերագարթօնքի գործում: Դուք Հայաստանին էք նուիրաբերել ոչ միայն Ձեր նիւթական միջոցները, այլեւ՝ միտքն ու զգացումները: Տասնամեակների Ձեր իմաստալից կեանքն ու գործունէութիւնը մեծապէս նուիրուած են եղել մեր ժողովրդին: Լինելով հեռատես անհատականութիւն, գործնական ու իրատես ազգային գործիչ՝ Դուք նախաձեռնեցիք եւ հիմնեցիք Հայ Օգնութեան Ֆոնդը՝ Մայր Հայրենիքին ցուցաբերող աջակցութիւնը համակարգւած կազմակերպելու համար»:

Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեան իր խօսքին մէջ կ'ըսէր. «... Հիմնուելով երկար տարիներու մեր բարեկամութեան վրայ՝ մենք կը հաստատենք որ սքանչելի անձ մը ըլլալու կողքին՝ տիար Յովնանեան իրապէս նուիրեալ Քրիստոնեայ մըն է մարդասիրական եւ կարեկից սրտով: Իր նուիրումը Տիրոջ հանդէպ ի յայտ եկաւ տարիներ առաջ՝ երբ ինքնակամօրէն մօտեցաւ մեզի եւ փափաք յայտնեց կառուցելու եկեղեցի մը իր ծնողաց յիշատակին: Ան իր նպատակը իրագործեց Էլպըրոնի մէջ (Նիւ Ճըրզի) կառուցելով գեղեցիկ համալիր մը՝ Ս. Ստեփաննոս եկեղեցին եւ մշակութային կեդրոնը՝ հարաւային Նիւ Ճըրզիի մեր հաւատացեալներուն համար»:

Աստղաբնագէտ տոկթ. Երուանդ Թերզեան բոլոր ներկաներուն զգացումներուն թարգմանը հանդիսանալով ըսաւ. «Շատ յաջող եւ մեծարեալին վայել ձեռնարկ մըն էր՝ ջերմութեամբ եւ մտերմութեամբ լեցուն: Գեորգ Յովնանեան Հայաստանի եւ ԱՄՆ հայ համայնքին վրայ փայլող աստղ մըն է»:

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ